

ԳԱԽԻԹ ԶԵՅԹՈՒՆՅԻ, ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆԻ, աշխատասիրությամբ
Ե. Կ. ՄԵԼԻՖՈՆՅԱՆԻ, ԵՐԵՎԱՆ, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1981:

Դավիթ Զեյթունցին այն հայ քերականներից է, որոնք ուշագրության էին արժանի շատ վաղուց: Եվ դա ոչ միայն նրա քերականական երկում քննված նյութերի, արժարժված հարցերի խորությամբ, այլև նյութը մատուցելու մանկավարժական մեթոդի ու ձևի առումով: Հ. Տաշյանը «Ցուցակ հայերեն ձևագրաց մատենագարանին Մխիթարյանց ի Վիեննա» (Վիեննա, 1895) գրքի նկարագրության բաժնում թեև Դավիթի անվան տակ ներկայացնում է հարց ու պատասխանի ձևով զրկած երկու քերականություն (№ 84 և 95), սակայն անվանացանկերի բաժնում այդ երկու քերականությունները վերադրում է Դավիթ Անհաղթին: Առաջինը՝ Նիկողայոս Աղոնցն էր, որ այս քերականությունը մատուցում է իրեն առանձին մի հեղինակի՝ ոմն Դավիթ Ամիրզեյունի երկասիրություն, բայց չի խորանում հեղինակի ինքնության ու երկի էության հարցի մեջ: 1954 թ. հրատարակած «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.)» աշխատության մեջ Գ. Զահուկյանը, ելնելով այդ ժամանակ հայտնի տվյալներից ու իր պրպումներից, ճշտում է հեղինակի ինքնությունը, ապրած ու ստեղծագործած ժամանակաշրջանը, Դավիթ Զեյթունցու և նրան նախորդած ու հաջորդած հեղինակների քերականական աշխատությունների միմյանց հետ ունեցած առնչակցությունները, վերլուծում ու գնահատում Դավիթ Զեյթունցու երկն ըստ առանձին բաժինների: Դավիթ Զեյթունցու և նրա երկի մասին ամբողջական գաղափար կազմելու համար անհրաժեշտ էր, սակայն, ի մի հավաքել նյութը պարունակող բոլոր ձևագրերը, ըստ բովանդակության ու օգտակարության դաս դասել դրանք, կազմել համահավաք բնագիր, նյութեր հավաքել Դավիթ Զեյթունցու կենսագրության վերաբերյալ, կատարել բանասիրական լրացուցիչ աշխատանքներ և այլն: Ուրախությամբ պետք է նշել, որ այդ բոլորը ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հանձնարարությամբ կատարել է Երվանդ Մել-

քոնյանը: Եվ կատարել է մեծ ջանադրությամբ ու բանասիրական հմտությամբ: Դավիթ Զեյթունցու քերականության նման հրատարակությունն ու ուսումնասիրությունը անհրաժեշտ էր նաև այն բանի համար, որ «Մեկնութիւն քերականի» երկում կան ժողովրդական խոսակցական լեզվի տարրեր:

Համոզիչ են այն տողերը, որոնք վերաբերում են Դավիթի մականվան ճշգրտմանը (էջ 6—7), նրա ծննդյան և մահվան թվականներին (էջ 7—10): Որոշելով և գտնելով հավաստի աղբյուրներ՝ Դավիթ Զեյթունցու տոմարի չափածո հիշատակարանը, նրա իսկ աշակերտների ու հետնորդների վկայությունները Դավիթ Զեյթունցու գործունեության ու մահվան մասին, Ե. Մելքոնյանը նրա ծննդյան մոտավոր ժամանակ է ընդունում 1530—40-ական թթ., իսկ մահվան համար տալիս է առավել որոշակի ու ստույգ մի թվական՝ 1619 (մարտից սեպտեմբեր ընկած ժամանակամիջոցը): Որպես գիտողություն անմիջապես ասենք, որ եթե Ե. Մելքոնյանն այս բաժինը (էջ 6—10) վերնագրել է «Կենսագրական տեղեկություններ», ապա պիտի անդրադառնար ոչ միայն Դավիթ Զեյթունցու ծննդյան ու մահվան թվականներին, այլև նրա գիտական-մանկավարժական գործունեությանը, մի բան, որ անտեսվել է գրախոսվող աշխատության մեջ, թեև այդ հարցի վերաբերյալ կան բավարար չափով տվյալներ:

Ե. Մելքոնյանն անհրաժեշտ եռամաս ու երկամաս զուգադրություններով ապացուցում է, որ Դավիթ Զեյթունցին որպես հիմնական աղբյուր ունեցել է Հովհաննես Երզնկացու (Մործորեցու) և ոչ թե Հովհաննես Երզնկացու (Պլուզի) քերականությունը, թեև երբեմն էլ օգտվել է Հովհաննես Պլուզի քերականական երկից (էջ 11—16):

Մանկավարժական և գիտական առումներով բացատրվում է, թե ինչպես և ինչու քերականությանը ներհանում է մեկնություններից ան-

ցում է կատարվում դեպի բան-մեկնությունները և վերջիններից էլ՝ դեպի հարցարանները (էջ 18—24)։ Քերականական հին մեկնություններում բան և մեկնություն հատկություն, որանց բնույթի ու ծավալի, տարանջատման պատճառով է, որ հետագայում ավելի են պարզվում, մշտնջենում դրանց սահմանները, և քերականությունն աշակերտներին ավելի մատչելի դարձնելու համար ի հայտ են գալիս հարց ու պատասխանի ձև ունեցող դասավորվածություններ։ Հեղինակը որոշ քերականական մեկնությունների կորուստը բացատրում է այս հանգամանքով (էջ 22—23)։

Դավիթ Զեյթունցու բուն քերականության վերլուծությունն ըստ դրա առանձին գլուխների բացահայտում է այն էական կետերը, հարցադրումները, որ պարունակում է «Մեկնություն քերականին»։ Ե. Մելքոնյանը հատուկ ուշադրություն է դարձնում, որ այս գլուխը Դավիթ Զեյթունցու աշխատության սոսկական վերաշարադրանքը չդառնա, այլ լինի երկի մասնագիտական վերլուծություն ու գնահատական։ Այստեղ ցույց են տրվում Դավիթ Զեյթունցու և նրա դրբի բերած նորությունն ու գիտական առաջընթացը քայլը (նաև թերությունը)։ Ե. Մելքոնյանը լույսայն չի անցնում գոյականի շեղոթ սեռի կամ առհասարակ երկակի թվի հիշատակման կողքով, այլ ցույց է տալիս այն ժխտական վերաբերմունքը, որ Դավիթ Զեյթունցին դրսևորել է հայերենի համար անհամար թեր քերականական այդ կարգի նկատմամբ (էջ 39, 54 և այլուր)։

Լատինատիպ քերականությունների և Դավիթ Զեյթունցու «Մեկնություն քերականին» երկի ընդհանրությունները քննելիս Ե. Մելքոնյանը բարևիդատվամբ վերլուծում է ոչ միայն այն, թե ինչ առավելություններ ու թերություններ ունեն լատինատիպ քերականությունները հայերենի քերականությունը շարադրելիս, այլև, թե ինչ արեց Դավիթ Զեյթունցին հայերենի քերականությունը հունատիպ ու լատինատիպ քերականությունների տարրերից աղատելու համար (էջ 50—55)։ Աշխատությունն առհասարակ շահում է այն առումով, որ Դավիթ Զեյթունցու երկի քերականական վերլուծությունը կատարվում է նախորդ և հաջորդ շրջանների քերականական երկերի համադրությամբ (էջ 39, 44, 52 և այլուր)։

Աշխատության կարևոր արժանիքներից մեկն էլ պիտի համարել այն, որ վերլուծելով Դավիթ Զեյթունցու երկի առանձին բաժինները կամ խոսքի մասերը, Ե. Մելքոնյանը մի քանի կետերով տալիս է այդ վերլուծությունից անհրաժեշտաբար բխող իր եզրակացությունները։

Կուպինք անել մի քանի դիտողություն։

Անհրաժեշտ էր, որ ձեռագրերի տեսության բաժնում համեմատվող ձեռագրերի նկարագրության հետ տրվեր նաև նրանց գրական, ուղղագրական, քերականական բնութագրությունը։ Դիցուք, թե այս կամ այն համեմատվող ձեռագիրը ա/օ, ի/ե, ե/է, ...ալ/...ոլ տարբերակներից որին է նախապատվություն տվել, ա-ով, ո-ով ավարտվող բառերի վերջում չ գրվել է թե ոչ, կա՞ն արդյոք ձայնեղ և խուլ բաղաձայնների փոխադարձ փոխարինումներ և այլ հանգամանքներ, որոնք բնութագրում են ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի, այլև գրչության տվյալ վայրի քերականական-ուղղագրական առանձնահատկությունները։ Քննական բնագիր կաղմելիս հատուկ ուշադրություն պիտի դարձնել այս կետի վրա, մանավանդ որ հրատարակվող աշխատությունն էլ լեզվին, քերականությանն է վերաբերում, ուստի և հատկապես պետք է ցույց տրվեն լեզվական իրավությունները։

Դավիթ Զեյթունցու քերականության մի ընդօրինակություն կա նաև Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքում (տե՛ս Սմբատ Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, ձեռագիր № 567, էջ 843), ուստի Դավիթ Զեյթունցու «Մեկնություն քերականին» պարունակող ձեռագրերի թիվը լինում է ոչ թե 10, ինչպես նշված է գրախոսվող երկի 56-րդ էջում, այլ 11։

Դ ձեռագրի (Մաշտոցի անվ. Մատենադարան, № 2330։ Գրախոսվող աշխատության մեջ սխալմամբ գրված է 2336) տեսության բաժնում կարդում ենք. «Երկրորդ գրչի հիշատակարանի հիման վրա ձեռագիրը համարվում է 1633-ի արտագրություն։ Բայց Վրդանես Դպրի ձեռագիրը բոլորովին այլ է, քան Դավթի հատվածը, ուստի և, կարծում ենք, արտագրվել է 1633-ից առաջ, որովհետև Վրդանեսի կողմից կատարված ուղղումներ կան Դավթի տեքստում» (էջ 58)։ Այս առիթով անհրաժեշտ ենք համարում նշել, որ Ե. Մելքոնյանը սխալ է ներկայացնում Մաշտոցի անվան Մատենադարանի № 2330 ձեռագիրը։ Այն 1642 (թթ. 3ա—102բ), 1643 (թթ. 103ա—183բ) և 1633 (թթ. 187ա—229բ) թթ. գրված երեք առանձին միավորների մի էղամի մեջ առնված միացություն է։ Առաջին երկու միավորների գրիչը Վրդանես Դպիրն է, իսկ երրորդ միավորին՝ Ստեփանոս Մշկոցին։ 1633 թ. գրված միավորը սխալմամբ կամ պատահմամբ է, որ տեղ է գրավում վերջին մասում։ Ուրեմն սխալ կլինի մի կաղմի մեջ

առնված բոլոր երեք միավորներին վերագրել 1633 թ. գրչություն, ինչպես այդ անում է ն. Մելքոնյանը, ըթե 1633 թ. գրված հատվածում Վրդանես Դպիրը 1642 կամ 1643 թ., ըստ ն. Մելքոնյանի, ուղղումներ է կատարել, մի՞թե դա տրամաբանական հիմք է տալիս կարծելու, թե ձեռագիրը «արտագրվել է 1633-ից առաջ»։ Դավիթ Զեյթունցու «Մեկնություն բերականի» երկը գրվել է Վրդանես Դպրի ձեռքով և ոչ թե մեկ ուրիշի (առենք Ստեփանոսի)։ Այդ դեպքում ինչպե՞ս կարող էր Վրդանես Դպիր, իբրև սրբագրողի, ձեռագիրը նույն Վրդանես Դպրի, իբրև գրողի, ձեռագրից տարբեր լինել։ Մուծ է մնում այն հարցը, թե ինչից էլնելով ն. Մելքոնյանը գտնում է, որ «երկրորդ գրչի (Վրդանես Դպիր—Ա. Զ.) հիշատակարանի հիման վրա ձեռագիրը համարվում է 1633-ի արտագրություն», երբ ձեռագրի 1633 թ. գրված հատվածի բուն գրչի՝ Ստեփանոսի հիշատակարանն է, որ նշում է գրչության որոշակի թվական՝ 1633։ Միաժամանակ չի բացատրված ու հիմնավորված, թե Վիեննայի երկու (№№ 84 և 95) ձեռագրերը ինչու պետք է առանձին խումբ կազմեն։

Աշխատությունը չունի «Ծանոթագրություններ» բաժինը, ուր պետք է բացատրություն ստանալին բնագրային անհասկանալի կամ դժվարահասկանալի հատվածներ, բերականական որոշ իրավություններ, նաև տեղ գտնելին ձեռագրերի գրչական կամ բնագրային հիշատակարանները։ Վերջին շրջանում հրատարակված մի շարք աշխատություններ չունեն տեղանունների, անձնանունների, օգտագործված գրականություն, նյութերի (թեմատիկ) և այլ ցանկեր։ Դա բարդացնում է պրպտումներ կատարողների աշխատանքը, ստեղծում դժվարություններ։

Խիստ ցանկալի էր նման բնույթի աշխատությունները ղերծ տեսնել լեզվական սխալներից ու անհարթություններից, իսկ այդպիսիք, ցավոք, կան գրախոսվող աշխատության մեջ (տե՛ս էջ 7, 25, 48, 58 և այլուր)։

Գնահատելի է, անշուշտ, որ ն. Մելքոնյանը գրքի վերջում տալիս է Դավիթ Զեյթունցու շա-

փածո տոմարը։ Գործը, կարծում ենք, ավելիկշահեր, եթե որպես հավելված ներկայացվեր նաև հայերեն բերականական տերմինների ցանկն իր բացատրություններով, որը, Գ. Զահուկյանի ենթադրությամբ (տե՛ս նրա «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» (V—XV դդ.)» սլատկանում է Դավիթ Զեյթունցու գրչին։

Ինչ-ինչ տեղեր սխալ է ցույց տրված բնագրի և ձեռագրի միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունը։ Աշխատության 63-րդ էջի տողատակում կարդում ենք. «13 Ա չի՞ բոք... ի շարագրողաց», այնինչ Ա ձեռագիրն ունի այդ հատվածը (բացակայում է միայն «ոբ-ը»)։ 64-րդ էջում բնագրային «Անէս եւ Ամրէս» հատվածի համար ցույց է տրված Անրէս տարբերակը։ Նախ՝ հասկանալի չէ, թե բնագրային երկու հատուկ անուններից որին է սլատկանում Անրէս տարբերակը, և երկրորդ՝ Անրէս տարբերակը ունի ոչ միայն Դ, այլև Ա սլոյմանանիշն ունեցող ձեռագիրը։ Տողատակի համաձայն, ի՞նչ ձեռագրերը «յԱնէս եւ յԱմրէս» հատվածի համար ունեն յԱնրէս, մինչդեռ այդ տարբերակը ունի նաև Ա-ն (էջ 64)։ Առանստ բառի փոխարեն Ա ձեռագիրն ունի առանստ, բայց դա իր արտահայտությունը չի գտել տարբերակների բաժնում (էջ 65)։ Էջ 182-ի տողատակում նշված է, որ բնագրի «ի տեղիս տեղիս»-ի համար Դ ունի ի տեղիս տարբերակը։ Սա կարելի է հասկանալ այսպես. «Ա ունի ի տեղիս ի տեղիս», մինչդեռ պարզապես պիտի նշվեր, որ «10 Դ ի տեղիս»։ Մի խոսքով, այս հարցում հսկիականը շատ ավելի բանիմացություն ու զգուշություն պիտի ցուցաբերեր։

Խիստ ցանկալի է, որ ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը շարունակել հայ հին և միջնադարյան բերականական աշխատությունների գիտական հրատարակության որբան դժվար, նույնչափ և շնորհակալ գործը։

Ա. Ս. ԶԵՅԹՈՒՆՑՈՒ

В. Р. ГРИГОРЯН. *История армянских колоний Украины и Польши. (Армяне в Подолии)*. Ереван, 1980, 292 с.

В книге В. Р. Григоряна рассматривается история возникновения и функционирования армянской диаспоры на Подолье. Рецензируемая монография написана с использованием значительного количества разноязычных источников и исследований (армянских, польских, украинских, русских, французских и пр.). В книге собрана детальная библиография

вопроса. Хронологическая работа охватывает период от XI до XIX вв.

В первом разделе рассматривается развитие каждой из 16 известных армянских колоний на Подолье; особенности их возникновения, занятия и хозяйство армянских общин, их жизнь в социальных условиях Речи Посполитой, а также армяно-польские и армяно-украинские культурные